ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 1-12 ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ ՃԻԴ. ՏԱՐԻ 2010

ԱՆԱՆԻԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏ ՎԱՍՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Աշխէն Իւզբաշեան

«Մեծ փիլիսոփայ, երեւելի վարդապետ, այր անուանի եւ գիտնական, լուսաւորիչ եկեղեցւոյ, մտաւոր եւ հանճարեղ եւ աստուածայնոց գրոց մեկնող՝ այսպիսի գրուատանքի խօսքերով է մեծարւում Անանիա Նարեկացին մեծ մտածողների կողմից[1]: Ժամանակի յայտնի դպրութեան կենտրոններից մէկի՝ Նարեկայ վանքի վանահայրն էր Անանիա Նարեկացին: Նա եղել է աստուածզգայ հոգեւորական, իր աշակերտներին սովորեցրել է երգեցողութիւն, գրականութիւն, ինքը յօրինել է մեկնութիւններ, խրատներ: Նրա գրչին են պատկանում «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցւոց», «Գիր խոստովանութեան», «Հաւատարմատ», «Հայոց պատմութիւն» խրատները[2]: Ցաւօք, ձեռագրերի մեծ մասում որպէս հեղինակ չի նշւում է Անանիա վարդապետը: Այդ պատճառով նրա գործերի դպրի մասը վերագրուել է Անանիա Շիրակացուն կամ էլ՝ Անանիա Սանահնեցուն, եւ նշանաւոր մտածողների մօտ տարակարծութիւններ են եղել Անանիա Նարեկացու գրական ժառանգութեան, այդ թւում նաեւ խրատների հարցում: Այս խնդրին իրենց ուսումնասիրութիւններում անդրադարձել են Մ. Աւգերեանը, Ս. Սոմալեանը, Է. Դուրեանը, Գ. Զարբհանալեանը, Մ. Աբեղեանը, Հր. Աճառեանը: Գրականագէտ Հր. Թամրազեանը, իր «Անանիա Նարեկացի» մենագրութեան մէջ մանրամասն քննելով այս խնդիրը, յանգում է այն կարծիքին, որ յայտնի 16 խրատներից 8-ը Անանիա Նարեկացու գրչին են պատկանում[3]:

«Խրատք քահանայից», «Վասն խոնարհութեան», «Վասն համբերութեան եւ խաղաղութեան», «Յաղագս խորհրդոց գգուշութեան», «Անանիայի խրատք եւ խրատ աւետարանական, առաքելական եւ մարգարէական որ տանին զմեզ ի կեանս յաւիտենական եւ ոչ տան խոտորել յաջ կամ յահեկ», «Նորին բանք աղօթից», «Այլեւ զայդ հարցեր, թէ զիա՞րդ կարէ մարդ զերկրաւորս արհամարհել որ անցա-

---

1 Գ. Զարբհանալեան, *Հայկական հին դպրութեան պատմութիւն*, Դ-ԺԳ դդ., Վենետիկ-Ս. Ղազար, 1897, էջ 532:

2 Մ. Աբեղեան, *Հայոց հին գրականութեան պատմութիւն*, Երեւան, 1944, էջ 517:

3 Հր. Թամրազեան, *Անանիա Նարեկացի*, Երեւան, 1986, էջ 192:

նէ»: Խրատները աստուածաբանական գրականութեան մէջ ուրոյն ստեղծագործութիւններ են, որոնք նպաստում են հոգեւոր մաքրագործմանը: Քանի որ մեծ մարդագէտ հոգեբանը յստակ զգում էր հոգու ամենանուրբ կէտերը, իր խրատներով փորձում է անդրադառնալ մարդկային այն առաքինութիւններին, որոնք կ'օժանդակեն հասնել Քրիստոսի կատարեալ անանձնական սիրուն: Ահա «Վասն խոնարհութեան» խրատը: Խոնարհութիւնը (ըստ ՆՀԲ-ի՝ խոնարհն գոլ *եւ* խոնարհիլն առաքինաբար, *պարկեշտութիւն, համեստութիւն, կրօնաւորութիւն)*[4] *այն մեծ առաքինութիւններից մէկն է, որը մարդուն զարգարում եւ մօտեցնում է Քրիստոսին, քանի որ Տէրն էլ էր պատգամում. «Առէ՛ք զլուծ իմ ի ձեզ եւ ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց» [Մատթ., ԺԱ 29]: Մեծ մտածողը, հրաժարուելով աստուածաբանական խրթին, գիտական բառապաշարից, բաւականին պարզ, հասկանալի լեզուով է գրում: Նա տարբեր համեմատութիւններ է անում, սուրբգրային մէջբերումներով համոզիչ եւ հաւաստի դարձնում իր խօսքը:*

Ժ. գարը համարւում էր գրաբարի համար նախամիջին ենթաշրջան. գնալով խորանում էին գրական լեզուի եւ ժողովրդախօսակցական լեզուի տարբերութիւնները: Մինչդեռ խրատի լեզուն յիշեցնում է պարզ, աստուածաշնչեան, բանաստեղծական գրաբարը: Անանիա Նարեկացին խրատում գործածել է յատուկ շարահիւսական մանրակաղապարներ, որոնք ստեղծում են ոճական առանձնայատկութիւններ: Գլխաւոր նախադասութիւնը «Խոնարհութիւն է», որին յաջորդում է ենթակայ երկրորդականը՝ ձեւաւորուած «որ» կամ «յորժամ»-ով, որին էլ իր հերթին յաջորդում են գրոյթը հաւաստի դարձնող սուրբգրային մէջբերումները՝ «Խոնարհութիւն է, յորժամ կատարես զառաքինութիւն, ոչ խորհիս, թէ յիմ անձնէ եւ ի զօրութենէ կատարեցի, այլ յԱստուծոյ օգնականութենէ: Որպէս ասէ առաքեալ...»: Խրատի 49 նախադասութիւններից 17-ը այսպիսի կառոյցներ են, որոնք էլ խրատին հաղորդում են իւրայատուկ բանաստեղծական շունչ: Հեղինակը ստորոգումները հիմնականում կատարել է սահմանական, երբեմն նաեւ՝ ստորադասական եղանակի բայաձեւերով, սակայն բոլոր նախադասութիւններն ունեն յորդորի նուրբ երանգներ, եւ այս տեսանկիւնից սրանք յորդորական նախադասութիւնների լաւագոյն նմուշներ են եւ յիշեցնում են Պօղոս առաքեալի նամակները: Լեզուն շատ յաճախ նմանւում է Յովհաննէսի Աւետարանի լեզուին՝ պարզ եւ սիրառատ[5]*:*

Բնագիրը կազմելիս օգտուել ենք ՄՄ-ի հետեւեալ ձեռագրերից Ա՝ 2680. 319ա-320ա (1371-1378 թթ.), Ա՝ 2335. 165ա-165բ (1476 թ.), Բ՝ 641. 19բ-23բ (ԺԶ. դ.), Գ՝ 2711. 120ա-122բ (1480 թ.), Դ՝ 5707. 326բ-327բ (1386 թ.), Ե՝ 1553 (ԺԵ. դ.): Հիմք ձեռագիրը ընդունել ենք ՄՄ 2680-ը: Այն 1377-1378 թթ. ձեռագիր է որտեղ խրատը ամբողջական է. միւս ձեռագրերում որոշ նախադասութիւններ չկան: Համեմատութիւնները կատարելիս աշխատել ենք հնարաւորինս վերականգնել քերականական ճիշտ ձեւերը, բառերը, բառակապակցութիւնների համապատասխան փոփոխութիւնները տրուել են ծանօթագրութիւններում:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Մ. Աբեղեան**, *Հայոց հին գրականութեան պատմութիւն*, գիրք 1, Երեւան, 1944:
2. **Անանի եւ Ժան-Պիեռ Մահէ**, *Դր. Նարեկացին եւ իր «Մատեան ողբերգութեան» երկը*, «Նաիրի», 2004:

4 *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Երեւան, 1981, հտ. 1, էջ 963:

5 **Եզ. ծ. վրդ. Պետրոսեան**, *Ներածութիւն Նոր Կտակարանի*, 1996, էջ 53:

3. **Գ. Զարբհանալեան**, *Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դդ.)*, Վենետիկ-Ս. Ղազար, 1897:
4. **Հր. Թամրազեան**, *Անանիա Նարեկացի*, Երեւան, 1986:
5. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Երեւան, 1981:
6. *Նոր կտակարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*, Փարիզ, 1828:

ԱՆԱՆԻԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏ ՎԱՍՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ[1]

I.

1. Արդ, որպէս ասէ առաքեալն[2]*. «Ամենայն խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել, քան զանձինս» [Փիլիպ. Բ 3]: 2. Արդ, զամենայն ասելով, յայտ է*[3]*, եթէ*[4] *բազում մասունք են խոնարհութեան. են ոմանք, որ սակաւ մասունս*[5] *ունին*[6] *ի խոնարհութենէ, եւ են, որ բազում եւ այլք զամենայն*[7]*: 3. Արդ, է նախ եւ առաջին՝ խոնարհութիւն, որ քան զամենայն մարդ զինքն անարժան համարի, որպէս մաքսաւորն, որ ոչ կամէր զաչսն*[8] *ընդ երկինս ամբառնալ*[9]*, վասն որոյ ի Տեառնէ գովեցաւ [տե՛ս Ղուկ ԺԸ 13]: 4. Խոնարհութիւն է եւ հնազանդութիւն, որ զինքն ի ծառայի կարգի ունէ եւ սպասաւորէ ընկերին*[10]*, որպէս ասէ առաքեալ. «Հնազա՛նդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի» [Եփես. Ե 21]: 5. Խոնարհութիւն է սուգ եւ արտասուք*[11]*, որ ոչ համարի զինքն ի վարձկանի կարգի, /թէ-պէտ եւ/*[12] */առնէ զառաքինութիւն/*[13]*, վասն որոյ Տէրն ասէ. «Յորժամ կատարիցէք /զամենայն առաքինութիւնս/*[14]*. ասասջիք, թէ*[15] *ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք» [Ղուկ. ԺԷ 10]: 6. Խոնարհութիւն է*[16]*, որ համբերէ եղբարն ի ժամ բարկութեան եւ զինքն համարի յանցաւոր, քանզի զայրանալ եւ ընդդէմ դառնալ հպարտութիւն է, որպէս ասէ Սողոմոն. «Այր ամբարտաւան ոչ համբերէ նախատանաց» [հմմտ. Առ. ԺԸ 3]: 7. Խոնարհութիւն է լռութիւն, որ ոչ համարի զինքն արժանի յառաջ կալ եւ խաւսել առաջի բազմաց, որպէս ասէ Տէրն. «Որ յանձնէ խաւսի, փառս անձին իւրոյ խնդրէ» [Յովհ. է 18]:*

8. Խոնարհութիւն է, յորժամ զընկերն մեծարէն եւ զքեզ անտես առնէն, դու ոչ տրտմիս, այլ այնպէս ասես. «Եթէ եւ ոչ ամենայն չեմ արժանի, զոր ունիմս», որպէս ասէ Սողոմոն. «Մի՛ ձգտիր ընդ մեծամեծս, այլ ի չափու կալ զանձն քո եւ առաջի Տեառն զտցես շնորհս» [Տե՛ս Առ. ԺԶ 3]:

9. Խոնարհութիւն է, որ ոչ ունի զընկերն ի ծառայութեան կարգի, այլ ինքն նմա սպասաւորէ, որպէս ասէ Տէրն. «Որդի մարդոյ ոչ եկն պաշտաւն առնուլ, այլ պաշտել» [Մատթ. Ի 28, Մարկ. Ժ 45]: 10. Խոնարհութիւն է, յորժամ տեսանես զյանցանս ուրուք եւ ո՛չ բամբասես եւ ո՛չ գատես զնա, այլ զայս ասես, թէ՝ «Ես յանցաւոր

1 A *Եթէ ո՞րչափ են մասունք են, որ մարդն կատարեալ խոնարհութիւն ստանար*, B *Վասն խոնարհութեան*, C *Եթէ որչափ մասունք են, որ մարդ կատարեալ առաքինութիւն ստանայ*, D *Եթէ որչափ մասունք են, որ մարդն կատարեալ խոնարհութիւն ստանայ*

2 Հիմնական ձեռագրում՝ Ա-ում, *առաքեալ* բառը առանց որոշեալ յօդի է:

3 B *յայտնէ*

4 ACD *եթէ* փխ *թէ*

5 Ա *սակաւ մասն*

6 ABCDE *ի խոնարհութեան*

7 ABCDE *զամենայն* փխ *զամենեսեան*

8 DE *զաչս*

9 ABCDE *համբառնալ*

10 AC *սպասաւորէ կարգ հնազանդութիւնն*

11 BD *արտասուս*

12 AC *[թէ որպէս]*

13 AC *զառաքինութիւնն*, B *[առաքինութիւն այլ եւ առնէ]*, EB *[այլ ժտութեամբ յուսայ առաքինութիւն]*:

14 ACD *[առաքինութիւնս զամենայն]*, DE *չիք առաքինութիւն*

15 ACDE *եթէ «որ խոնարհութիւն ոչ է, հուրեալ է եւ ի բաց ընկեցեալ առաքինութիւնն*

16 ACD *չիք* 6-ից 13 նախադասութիւնները

եմ, զայլ ոք ոչ կարեմ դատել», վասն որոյ Տէրն ասէ. «Մի՛ դատիք, զի մի՛ դատիցիք» [Մատթ. է 1]: 11. Խոնարհութիւն է եւ սիրել զեղբայրն, քանզի սիրոյ պատուիրանքն այսոքիկ են՝ խոնարհիլ յընկերն, ի հիւանդութեան ցաւակից լինել, ի տրտմութեան մխիթարել, զանձն ի ծառայութիւն տալ: 12. Իսկ հպարտն զայս ոչ առնէ եւ ոչ համարի զեղբայրն արժան խոնարհել ի նա[1]: 13. Վասն այսորիկ գրեալ է. «Եթէ խոնարհութիւն որպէս կայ՝ համեմիչ է ամենայն առաքինութեան եւ ուր սէր է եւ խոնարհութիւն ոչ է, հոտեալ եւ ի բաց ընկեցեալ է առաքինութիւն»: 14. Խոնարհութիւն է, որ[2] [զառաքինութիւնն զինչ եւ առնեսս][3], ոչ ածես զմտաւ եւ հպարտանաս, որպէս փարիսեցին, այլ զոր ինչ[4] մեղանչես, զայն ածես զմտաւ եւ խոնարհեցուցանես զմիտսդ, որպէս եւ[5] առաքեալ յանցաւոր համարէր զանձն եւ ասէր. «Հայհոյիչ էի եւ բշնամանիչ եւ գտի ողորմութիւն» [Ա. Տիմ. Ա. 13]. 15. Եւ դարձեալ, թէ[6] «Զառ ի յետոյսն մոռացեալ եմ զառաքինութիւնն եւ յառաջադէմս նկրտեալ եմ[7]» [Փիլիպ. Գ 13]: 16. Խոնարհութիւն է, յորժամ փառաւորեն զքեզ մարդիկ եւ պարգեւս տան, դու ոչ համարիս քո անձինդ արժանեացդ, այլ զԱստուած փառաւորես եւ յԱստուծոյ գոհանաս եւ ասես, թէ «Այն ի Քո յողորմութենէդ է եւ ոչ ըստ իմում արժանեացս»: 17. Որպէս[8] ասէ Սողոմոն. «Ուշափ ի մեծութիւն հասանես[9] ի խոնարհութիւն կալ զանձն քո եւ առաջի [Աստուծոյ գտցես ողորմութիւն եւ շնորհս]»[10] [Առակ. ԺԶ 3]: 18. Խոնարհութիւն է, յոր[11] վշտի հանդիպիս եւ նեղութիւն հասանէ ի վերայ[12], դու ոչ տրտմիս, այլ գոհանաս զԱստուծոյ[13]: 19. «Եթէ[14] ես ոչ այսչափ միայն, այլ եւս[15] բազում պատժոյ արժանի եմ ըստ մեղաց իմոց եւ օրհնեալ է Աստուած, որ յայս յանցաւոր կեանքս եւ ի մահկանացու մարմնի վշտի [արար զիս արժանի]»[16]: 20. Որպէս ասէ առաքեալ. «[Հանեալ եմ[17] ընդ նեղութիւնս, ընդ վիշտս], ընդ շարչարանս, զի յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ» [Բ. Կոր. ԺԲ 10]: 21. Խոնարհութիւն է[18] գձուձ հանդերձն, որ ոչ զգենու զպատուականն [եւ զփառաւորն][19], քանզի փառք մարդիկ ի հանդերձից որսան: 22. Վասն որոյ գրեալ է. «Մի զգեստիւք խեղճեալացուք [կակղամ եւ շուրջ պնեցելովք][20], [որոց գեղեցկութիւնն է][21] ապաշնորհ» [հմմտ. Ա. Տիմ. Բ 9]: 23. Խոնարհութիւն է՝ յորժամ օրն խաղաղութեամբ անցանէ, ի վերայ եւ ցերեկն հասանիս, գոհանաս զԱստուծոյ[22] «Եթէ բազումք ի մարդկանէ եւ սրբոց իսկ անհանգիստ եւ կարօտ են, իսկ ես որ անարժանս եմ, [հաց եւտուր ինձ եւ կերակուր][23] եւ զօրս խաղաղութեամբ անցուցեր, այդ Քո ողորմութենդ է[24] եւ ոչ ըստ իմ արժանեացս»: 24. Վասն որոյ մարգարէն ասէր. «Ո՞վ եմ ես, [Տէր իմ, Տէր եւ զի՞նչ տուն ազգականի իմոյ, որ այդ-

1 E *այլ զինքն ձեր ի վերոյ համարի, քան զամենեսեան.* ABC *չիք որ*

2 ABC *Որ*

3 BDE *Զինչ եւ առնես զառաքինութիւն,* A *առաքինութիւն*

4 C *չիք Ինչ*

5 ACD*չիք Եւ*

6 E *թէ փխ եթէ*

7 A *ակրտիմ, ուշ եղեալ ընթանամ ի կէտ կոչմանն,* C *ակրտիմ, ուշ եղեալ ընթանամ ի կէտ կոչմանն Քրիստոսի*

8 D *որպէս եւ*

9 AC *հասանիցես,* DE *հասանիցիս խոնարհութեան:*

10 ACDE *[Տեառն գտցես շնորհս]*

11 AC *յորժամ*

12 ABC *ի վերայ քո*

13 AC *յԱստուածոյ,* E *յԱստուծոյ եւ ասես*

14 ACD *Եւ թէ*

15 ACDE *այլ եւ,* B *այս*

16 AD *[արժանի արար զիս,* B-ում *[ի վշտի մարմնիս արժանի արար զիս]*

17 AC *[ուրախ եմ ընդ նեղութիւնս եւ ընդ վիշտս եւ]*

18 BDE *Խոնարհութիւն է եւ գձուձ հանդերձ*

19 AC *չիք եւ զփառաւորն*

20 AC *[եւ պնեցելովք]*

21 ACDE *[որոյ գեղեցկութիւն է]*

22 A *յԱստուծոյ*

23 ABC *[հաց ինձ եւ կերակուր եւտուր]*

24 ABC *ողորմութիւնդ արժանեաց*

չափ սիրեցեր զիս»][1] [Բ. Թագ., է 18]: 25. Խոնարհութիւն է՝ յորժամ կամիս առաքինութիւնս առնել, ո՛չ համարիս զքեզ բաւական սկսանել եւ կատարել, այլ յԱստուծոյ խնդրել առաքինութիւն եւ աւգնականութիւն, եւ թէ՝ «Աւգնեա՛ տկարութեանս իմոյ, զի կարացիցս առնել զհաճոյս Քո»: 26. Որպէս եւ Տէրն ասէ. «Ուր հաստատեալ է յիս եւ ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ, զի առանց Իմ ոչ ինչ կարէք առնել» [Յովհ. ԺԵ 5][2]: 27. Խոնարհութիւն է՝ յորժամ սիրաց զայրանայ, դու արգելուս զցասումն եւ ոչ համարիս զքեզ արժանի ընդդէմ դառնալ եղբօրն: 28. Որպէս ասէ Սողոմոն. «Յողոմ բանի եւեթ կայ խոնարհամիտն, իսկ հպարտն յանդուգն տայ պատասխանի» [Առակ. ԺԸ 23]: 29. Խոնարհութիւն է, որ ոչ միայն զայնոսիկ սիրես, որ փառաւորք են մարդկանէ, այլ յաղքատն խոնարհիս եւ զպանդխտն մխիթարես, որպէս Տէրն առնէր: 30. Պիղատոս խաւսէր եւ Նա չտայր պատասխանի, իսկ ընդ աւազակին բազում գթով խաւսէր եւ պարգեւս տայր: 31. Եւ յորժամ կոյրքն աղաղակէին զտեղիս առնոյր եւ մերձեցեալ[3] յաչս նոցա եբաց: 32. Խոնարհութիւն է, որ ոչ վարիս [քո կամաւքդ հանապազ][4], այլ խրատ առնուս յառաջնորդաց եւ ի վարդապետաց, որպէս Մովսէս, որ [ոչ էր անլուր խրատուն Յոթորայ][5], այլ ընկալաւ եւ կատարեաց զամենայն: 33. Խոնարհութիւն է, որ յամենայն [դրժող իրաց][6] զարհուրի եւ պատրաստի եւ ոչ հպարտանայ եւ ասէ Ո՛վ յաղթեսցէ ինձ, վասն որոյ ասէ Սողոմոն. «Փշրեն զսիրտս իմաստնոց սպառնալիք, իսկ հպարտն յանձնապաստան յորոգայթ անկանի» [հմմտ Առակ. ԺԷ 10]: 34. Խոնարհութիւն է, յորժամ կատարես զառաքինութիւն, ոչ խորհիս, թէ յիմ անձնէ եւ ի զօրութենէ կատարեցի, այլ յԱստուծոյ օգնականութենէ: 35. Որպէս ասէ առաքեալ. «Ոչ ես, այլ շնորհքն Աստուծոյ, որ յիս» [Ա. Պետ. Բ 19, 20]: 36. Խոնարհութիւն է, որ ոչ մատչիս յառաջ, եւ առնուս աւելի ատիճան, քան զոր ունիս, այլ կոչեցեալ յառաջնորդաց ընկալցիս: 37. Որպէս ասէ առաքեալ. «Ոչ որ զանձն ընծայեցուցանէ, նա է ընտրեալ, այլ զոր Աստուած ընծայեցուցանէ» [Բ. Կոր. Ժ 18]:

II.

1. Արդ, հիմն ամենայն[7] առաքինութեան է խոնարհութիւնն, եւ ամենայն սուրբք խոնարհութեամբ եղեն [Աստուծոյ հաճոյ][8]: 2. Որպէս Աբրահամ խոնարհէր եւ ասէր. «Ես հող եմ եւ մոխիր» [Ծնն. ԺԸ 27], վասն այնորիկ զգլուխս նահապետացն եղեւ: 3. Այսպէս եւ Դաւիթ ասէր[9]. «Ես որդն եմ եւ ոչ եմ մարդ, նախատինք մարդկան» [Սաղմ. ԻԱ. 7], վասն այսորիկ առ զշնորհս յԱստուծոյ մարգարէութեան եւ կոչեցաւ ի թագաւորութիւն ժողովրդեանն: 4. Այսպէս եւ Եսայի ասէր. «Վա՛յ ինձ, զի պիղծ զշրթունս ունիմ» [Ես., Զ 5], վասն յայսոսիկ աստուածարան կոչեցաւ ի մարգարէսն: 5. Այսպէս եւ Կարապետն ասէր. «Ոչ եմ արժանի լուծանել զխարցս կաշկաց Նորա» [Յովհ. Ա. 27, Մարկ. Ա. 7], վասն այնորիկ արժանի եղեւ զՔրիստոս մկրտել: 6. Այսպէս եւ Պետրոս ասէր. «Ի բաց գնա յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես» [Ղուկ. Ե 8], վասն այսորիկ զփականս երկնից ընկալաւ եւ հիմն [եկեղեցւոյ եղեւ]: 7. Այսպէս եւ Պաւղոս ասէր. «Ոչ ես եմ արժանի կոչեալ առաքեալ» [Ա. Կոր. ԺԵ 9], վասն այսորիկ ընդ երկինս թռեաւ եւ դրախտին լինէր տեսանող:

8. Արդ քանզի խոնարհութիւն է գլուխ առաքինութեան, վասն որոյ մարգարէն ասէ. «Զհոգի խոնարհ եւ զսիրտ սուրբ Աստուած ոչ արհամարհէ» [Սաղմ., Ծ 19]: 9. Եւ Եսայի ասէ. «Ես յո՞ բնակեցայց, թէ ի հեզս եւ ի խոնարհս»[10]

1 E չիք *[Տէր իմ, Տէր եւ զինչ տուն ազգական իմոյ, որ այդչափ սիրեցեր զիս]*

2 E չիք 22-31 նախադասութիւնները

3 C *մերձեցաւ*

4 ABCD *[հանապազ քո կամաւքդ]*

5 ACD *[խրատուն Յոթորաց ոչ եղեւ անլուր]*, CD *Յոթորի,* E *Յոթորայ*

6 AC *[դրժողաց]*

7 ACDE չիք *Ամենայն*

8 ACDE *[հաճոյ Աստծոյ]*

9 A *Ասէ* փխ *Ասէր* (ամենուր)

10 ACD *Ես յո՞ բնակեցայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս, եւ որ դողան ի բանից իմոց*

[Ես., ԿԶ 2]. *10. Եւ նոյն [Ինքն Տէրն] ասէր.* «Ու խոնարհեցուցանէ զանձն, բարձրացի» [Ղուկ., ԺԴ 11] *11. Եւ Պաւղոս ասէ.* «Ամենայն խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել, քան զանձինս» [Փիլիպ., Բ 3] *12. Եւ ի վարդապետաց անչափ կայ վկայութիւն վասն խոնարհութեան, քանզի չիք այնպէս սիրելի Աստուծոյ, որպէս ոք, որ խոնարհեսցի եւ յետին համարել զանձն վասն Քրիստոսի, վասն զի Նմա վայել է փառք եւ իշխանութիւն այժմ եւ յաւիտեանս. ամէն:*

ԽՐԱՏ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(թարգմանութիւն)

I

*Արդ, ինչպէս ասում է առաքեալը. «Ամենայն խոնարհութեամբ միմեանց պէտք է աւելի լաւ համարել, քան ինքներդ ձեզ»: Արդ, «ամենայն» ասելով, յայտնում է, որ խոնարհութեան մասերը շատ են. կան ոմանք, որ խոնարհութիւնից քիչ մաս ունեն, ոմանք՝ շատ, եւ միւսները՝ ամբողջը: Արդ, նախ եւ առաջ՝ խոնարհութիւն է, որ [մարդ] ինքն իրեն անարժան է համարում բոլոր մարդկանցից, ինչպէս մաքսաւորը, որ չէր կամենում աչքերը երկինք բարձրացնել, որի համար Տիրոջից դրուատուեց: Խոնարհութիւն է եւ հնազանդութիւնը, որ [մարդ] ինքն իրեն վարձկան չի համարում, թէպէտ առաքինութիւն է գործում, որի մասին Տէրն ասում է. «Երբ կատարէք առաքինութեան բոլոր գործերը, ասացէ՛ք, թէ՝ «Անպէտ ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք անել, այն արեցինք»: Խոնարհութիւն է, որ [մարդ] համբերում է եղբօրը բարկութեան ժամին եւ իրեն է յանցաւոր համարում, քանզի զայրանալը եւ ընդդիմանալը հպարտութիւն է, ինչպէս ասում է Սողոմոնը. «Ամբարտաւան մարդը նախատինքների չի համբերում»: Խոնարհութիւն է լռութիւնը, որ [մարդ] իրեն արժանի չի համարում առաջ գալ եւ բազմութեան առջեւ խօսել, ինչպէս ասում է Տէրը. «Ով իր անձից է խօսում, իր անձի փառքն է որոնում»: Խոնարհութիւն է, երբ մեծարում են ընկերոջդ եւ քեզ անտեսում, դու չես տրտմում, այլ այսպէս ես ասում, թէ՝ «Սրան էլ արժանի չեմ, ինչ ունեմ», ինչպէս ասում է Սողոմոնը. «Մեծամեծներին մի՛ ձգտիր, այլ չափի մէջ պահիր քո անձը եւ Տիրոջ առջեւ շնորհներ կը գտնես»: Խոնարհութիւն է, որ ընկերոջը ծառայ չի պահում, այլ ինքն է նրան ծառայում, ինչպէս ասում է Տէրը. «Մարդու Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու»: Խոնարհութիւն է, երբ տեսնում ես որեւէ մէկի յանցանքը եւ չես բամբասում եւ ոչ էլ դատում նրան, այլ այսպէս ասում, թէ «Ես յանցաւոր եմ, ուրիշ մէկին չեմ կարող դատել», որի մասին Տէրն ասում է. «Մի՛ դատէք, որպէսզի չդատուէք»: Խոնարհութիւն է եւ եղբօրը սիրելը, քանզի սիրոյ պատուիրանները հետեւեալն են՝ խոնարհ լինել ընկերոջ առջեւ, հիւանդութեան դէպքում ցաւակից լինել, տրտմութեան ժամանակ մխիթարել, անձը ծառայութեան տալ: Իսկ հպարտն այսպէս չի անում եւ արժանի չի համարում եղբօր առջեւ խոնարհուելու, այլ իրեն բոլորից վեր է համարում: Այս մասին գրուած է, թէ՝ «Խոնարհութիւն է՝ որ ինչ առաքինութիւն էլ գործում ես, չես խորհում եւ հպարտանում, ինչպէս փարիսեցին, այլ խորհում ես մեղանչածներիդ մասին եւ խոնարհեցնում միտքդ, ինչպէս առաքեալն էր իրեն յանցաւոր համարում եւ ասում. «Հայհոյիչ էի եւ հալածիչ եւ ողորմութիւն գտայ» եւ դարձեալ, թէ՝ «Մոռացել եմ հետեւում մնացած առաքինութիւնները եւ ձգտում եմ դէպի առջեւումս եղածները»: Խոնարհութիւն է, երբ մարդիկ քեզ փառաբանում եւ պարգեւներ են տալիս, սակայն քո անձի արժանիքներին չես վերագրում, այլ Աստծուն ես փառաբանում, Աստծուց գոհանում եւ ասում, թէ այն Քո ողորմութիւնից է եւ ոչ ըստ իմ արժանիքների, ինչպէս ասում է Սողոմոնը. «Որչափ մեծութեան էլ հասնես, քեզ խոնարհ պահիր եւ շնորհ եւ ողորմութիւն կը գտնես Աստծու առջեւ»: Խոնարհութիւն է, երբ վշտի ես հանդիպում, եւ նեղութիւն է քեզ վրայ հասնում, դու չես տրտմում, այլ գոհանում Աստծուց. «Ըստ իմ մեղքերի ես ոչ միայն այսչափ, այլեւ բազում պատիժների եմ արժանի, եւ օրհնեալ է Աստուած, որ այս անցաւոր կեանքում եւ մահկանացու մարմնի մէջ ինձ վշտի արժանացրեց», ինչպէս ասում է առաքեալը. «Յօժար եմ նեղութիւնների, վշտերի, չարչարանքների, որովհետեւ երբ տկարանում եմ, այդժամ զօրանում եմ» [Բ. Կոր., ԺԲ 13]: Խոնարհութիւն է անշուք հանդերձը, որ [մարդ] թանկարժէքն ու փառաւորը չի հագնում, որովհետեւ մարդիկ փառքը հանդերձից են որսում. այս մասին գրուած է. «Մի՛ ցոփացէք մեղկ եւ ամբողջովին պճնուած զգեստներով, որոնց գեղեցկութիւնն ապաշնորհ է»: Խոնարհութիւն է, երբ օրը խաղաղութեամբ է անցնում, հասնում ես երեկոյին, գոհանում Աստծուց, թէ «Մարդկանցից եւ սուրբերից շատերն իսկ անհանգիստ եւ կարօտ են, իսկ ինձ, որ անարժան եմ, հաց եւ կերակուր տուեցիր եւ օրս խաղաղութեամբ անցկացրիր, այդ Քո ողորմութիւնից է եւ ոչ ըստ իմ արժանիքների», որի մասին մարգարէն ասում էր. «Ո՞վ եմ ես, Տէ՛ր իմ, Տէ՛ր, եւ իմ ազգականի տունն ի՞նչ է, որ այդչափ սիրեցիր ինձ»: Խոնարհութիւն է, երբ կամենում ես առաքինութիւններ գործել, սկսելու եւ աւարտելու համար քեզ բաւարար չես համարում, այլ Աստծուց ես առաքինութիւն եւ օգնականութիւն խնդրում, թէ «Օգնի՛ր իմ տկարութեանը, որ կարողանամ կատարել Քո կամքը», ինչպէս եւ Տէրն է ասում. «Ով հաստատուած է իմ մէջ, եւ ես՝ նրա մէջ, նա շատ պտուղ կը տայ, որովհետեւ առանց ինձ ոչինչ անել չէք կարող»: Խոնարհութիւն է, երբ սիրաղ զայրանում է, դու արգելում ես ցասումը եւ քեզ արժանի չես համարում ընդդիմանալ եղբօրը, ինչպէս ասում է Սողոմոնը. «Խոնարհամիտը միայն ողոքիչ խօսքերով է աղաչում, իսկ հպարտը յանդուգն պատասխան է տալիս»: Խոնարհութիւն է, երբ սիրում ես ոչ միայն նրանց, որ փառաւորուած են մարդկանցից, այլ խոնարհւում ես աղքատների առջեւ եւ մխիթարում պանդուխտներին, ինչպէս Տէրն էր անում: Պիղատոսը խօսում էր, եւ Նա պատասխան չէր տալիս, իսկ աւազակի հետ գթառատաբար խօսում եւ պարգեւներ է տալիս, երբ կոյրերը աղաղակում էին, կանգ առաւ եւ դիպչելով նրանց աչքերին՝ բացեց: Խոնարհութիւն է, որ միշտ քո կամքով չես գործում, այլ վարդապետներից եւ առաջնորդներից խրատ ես վերցնում, ինչպէս Մովսէսը, որ չանտեսեց Յոթորի խրատները, այլ ընդունեց եւ բոլորը կատարեց: Խոնարհութիւն է, որ [մարդ] բոլոր դրժելի իրերից զարհուրում, զգուշանում եւ չի հպարտանում՝ ասելով. «Ո՞վ ինձ կը յաղթի», որի մասին Սողոմոնն ասում է. «Սպառնալիքները փչրում են իմաստունների սրտերը, իսկ հպարտն, ինքն իրեն ապաւինելով, որոգայթի մէջ է ընկնում»: Խոնարհութիւն է, երբ առաքինութիւն ես կատարում, չես խորհում, թէ «իմ անձով եւ զօրութեամբ կատարեցի, այլ Աստծու օգնութեամբ», ինչպէս ասում է առաքեալը. «Ո՛չ ես, այլ Աստծու շնորհը, որ իմ մէջ է»: Խոնարհութիւն է, որ առաջ չես ձգտում եւ ունեցածիցդ աւելի բարձր աստիճան չես վերցնում, այլ առաջնորդների կողմից կանչուելով ես ընդունում, ինչպէս ասում է առաքեալը. «Ոչ թէ նա է ընտրեալ, ով ինքն իրեն է գովում, այլ ում Աստուած է գովում»:

Արդ, ողջ առաքինութեան հիմքը խոնարհութիւնն է, եւ բոլոր սուրբերը խոնարհութեամբ են հաճոյ եղել Աստծուն: Ինչպէս Աբրահամն էր խոնարհւում եւ ասում. «Ես հող եմ ու մոխիր», դրա համար նահապետների գլուխ եղաւ: Այսպէս եւ Դաւիթն էր ասում. «Ես որդ եմ եւ ոչ մարդ, նախատինք եմ մարդկանց համար», դրա համար Աստծուց մարգարէութեան շնորհ ստացաւ եւ կանչուեց ժողովրդին թագաւորելու: Այսպէս եւ Եսային էր ասում. «Վա՜յ ինձ, որովհետեւ պիղծ շուրթեր ունեմ», դրա համար աստուածաբան կոչուեց մարգարէների մէջ: Այսպէս եւ Կարապետն էր ասում. «Արժանի չեմ արձակելու նրա կօշիկների կապերը», դրա համար արժանի եղաւ Քրիստոսին մկրտելու: Այսպէս եւ Պետրոսն էր ասում. «Հեռո՛ւ գնա ինձանից, Տէ՛ր, որովհետեւ մեղաւոր մարդ եմ ես», դրա համար երկնքի արքայութեան բանալիները ստացաւ եւ Եկեղեցու հիմք եղաւ: Այսպէս եւ Պօղոսն է ասում. «Արժանի չեմ առաքեալ կոչուելու», դրա համար երկինք թռաւ եւ դրախտ տեսաւ:

II

Արդ, քանզի խոնարհութիւնն է ողջ առաքինութեան գլուխը, ուստի մարգարէն ասում է. «Աստուած չի արհամարհում խոնարհ հոգին եւ սուրբ սիրտը»: Եւ Եսային ասում է. «Ես որտե՞ղ բնակուեմ, եթէ ոչ հեզերի, խոնարհների մէջ»: Եւ Նոյն Ինքը՝ Տէրը, ասում էր. «Ով խոնարհեցնում է իր անձը, կը բարձրանայ»: Եւ Պօղոսն ասում է. «Ամենայն խոնարհութեամբ միմեանց պէտք է աւելի լաւ համարել, քան ինքներդ ձեզ» [Փիլիպ. Բ 3]: Եւ վարդապետներից անթիւ վկայութիւններ կան խոնարհութեան մասին, քանզի ոչ ոք Աստծուն այնպէս սիրելի չէ, ինչպէս նա, ով խոնարհ է եւ իրեն յետին է համարում՝ յանուն Քրիստոսի, որովհետեւ Նրան վայել է փառք եւ իշխանութիւն այժմ եւ յաւիտեանս, ամէն:

ՎԱՍՆ ՈՐ Ի ՍՈՒՐԲՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԱԾՔ՝ ԹՈՒՈՎ ԵՒ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՎ

Ալեքսան Յակոբեան

ԱՌԱՋԱԲԱՆ

Ը. դարի սկզբի անանուն հեղինակի «Վասն որ ի սուրբն Երուսաղէմ եկեղեցւոյ շինուածք՝ թուով եւ հիմնադրելով» վերտառութեամբ գրութիւնը պահպանուել է միայն Ժ. դարի վերջի պատմիչ Մովսէս Դասխուրանցու (ուշ ձեռագրերում՝ եւ գրականութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) Պատմութիւն Աղուանից երկում (գիրք Բ, գլուխ ԾԱ): Դա մի փոքրածաւալ երկ է Երուսաղէմ քաղաքի ու նրա շրջակայքի սուրբ վայրերից գլխաւորների մասին: Բովանդակութեան քննութիւնից երեւում է, որ երկն, ըստ ամենայնի, ամբողջական է, թէպէտ հնարաւոր չէ մինչեւ վերջ պարզել նրա ստեղծման հանգամանքները: Պարզ է միայն, որ Մովսէս Դասխուրանցին այն յայտնաբերել է Աղուանից կաթողիկոսարանում իր ձեռքի տակ գտնուած մի ժողովածոյում, որում հաւաքուած էին զանազան նիւթեր, ինչպէս որ այլ դէպքերում ունենք միջնադարեան տարբեր հոգեւոր կենտրոններում ստեղծուած տոհմամատեան-ժողովածոներում՝ քեսթուկներում:

Մենք ունենք վաղ միջնադարեան եւս մի գրութիւն, որտեղ բաւական հանգամանալից ներկայացուած են Երուսաղէմի վանքերն ու եկեղեցիները, ճիշտ է՝ միայն հայկական: Դա Անաստաս վարդապետ Յերասղոսեցու կազմած «Վասն վանորէից Հայոց, որ ի սուրբ քաղաքն Յերուսաղէմ» փոքրածաւալ երկն է, որի մի տարբերակից քաղուածաբար օգտուել է նաեւ Մովսէս Դասխուրանցին՝ շարադրելով իր Պատմութիւն Աղուանիցի Բ. գրքի յաջորդ (վերջին) գլուխը (ԾԲ): Հնարաւոր է ենթադրել, որ Ժ. դարի վերջի պատմիչի օգտագործած ժողովածոյում եւս վերջինս եւ մեր Անանունի գրուածքը գտնուել են կողք կողքի: Այդ դէպքում, գուցէ, տեղին է նաեւ ընդունել այն վարկածը, թէ այդ երկուսը միեւնոյն ծագումն ունեն՝ եթէ ոչ հեղինակի, ապա գոնէ ստեղծման հանգամանքների իմաստով:

Ըստ այդմ, թէ՛ Անաստաս վարդապետի, թէ՛ Անանունի ցուցակների գրառումն աւելի հաւանական է կապել 703 թ. իրագործուած Սահակ Զորոփորեցի կաթողիկոսի (677/8-703 թթ.)՝ դէպի Ասորիք ուղեւորութեան նախապատրաստական աշխատանքների հետ, երբ կազմակերպիչները զիտակ վարդապետներին խնդրել են ինչ-ինչ տեղեկանք-ուղեցոյցներ կազմել մեկնողների համար: Եւ այդպիսով կարելի է դրանք թուագրել 700-ական թթ. սկզբներով: Նշուած աշխատանքների մասին առաւել մանրամասն պատմող Ղեւոնդ վարդապետի եւ Շապուհ Բագրատունու տեղեկութիւններից երեւում է, որ Դամասկոսում արաբ խալիֆային այցելելուց յետոյ ծերունազարդ կաթողիկոսի խմբի ուղեւորութիւնը նախատեսուած էր հասցնել մինչեւ Երուսաղէմ, թէպէտ վեհափառի վաղաժամ մահուան պատճառով դա յաջողուեց անել միայն նրա ուղեկիցներից ոմանց:

Շապուհ Բագրատունու անունով յայտնի Պատմութեան մի պահպանուած կտորում այս ուղեւորութեան առիթով յիշատակւում է Վահան Կամսարական (պահպանուած միակ ձեռագրում՝ Կամեսական) իշխանի անունը, որը դժուար չէ ենթադրաբար զուգադրել Անաստաս վարդապետի գրութեան պատուիրատու Համա-